

սակայն քայլ մըն ալ աւելի անդին
նետեց ու մեռաւ

Ոչ ինք ոչ ալ մենք
այնտեղ հասնելու պատրաստ չէինք դեռ

ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

Հող չէր եւ թէ հող պիտի չդառնար

Ան պիտի հալէր անջրպետին մէջ
պիտի իր լոյսը կաթէր մեր վրայ
արեւուն շողին հետ ընդելուզուած

Հող չէր եւ թէ հող պիտի չդառնար

Կ. Պոլիս, 1978

ՋԱՀՐԱՏ

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ՄԵԾ ՔԱՂԱՔԸ

Գրեց
ՋԱՀՐԱՏ

Յառաջարկ՝ Ալ. Թովչեանի, «Սովետա-կամ Գրող» Հրտկչ., Երեւան 1978, էջ 188:

«Սովետական Գրող» հրատարակչու-թենէն 1978ի ընթացքին «Մեծ Քաղաքը» ընդհանուր խորագիրով լոյս տեսած են սփիւռքահայ յայտնի բանաստեղծ Ջահ-րատի քերթուածները: Գիրքը կը պարունակէ հեղինակին «Մեծ Քաղաքը» (1960), «Բարի Երկինք» (1970) ու «Կա-նանջ Հող» (1976) անուններուն ներքեւ ներկայացուած բանաստեղծութիւնները՝ մեծ մասով: Հատորին յառաջաբանը գը-րած է Ալեքսանդր Թովչեան:

Այսօր եթէ նոյնիսկ տակաւին կը հանդիպինք անձերու՝ որոնք յամառ թե-րահաւատութեամբ մը կ'ողջունեն Ջահ-րատի եւ այդ ուղիով ընթացող մեր գնորդ գրականութեան յայտնի դէմքե-րու գործերը, սակայն այլեւս իրակա-նութիւն մըն է թէ լոկ նոր շունչ մը բերելու փափաքը, եւ կամ ժամանակա-կից օտար գրականութիւններու ազդե-ցութիւնը չէր գիրենք բանաստեղծ դար-ձընողը: Ո՛չ ալ անոնց գիրքը մեր նոր շրջանի գրականութեան մէջ անկարելի փակագիծ մը եղաւ: Անոնք իրենց գոր-ծով շարունակեցին քալել այն ճամբա-յէն, որ բացուած էր Ա. Շաւարշեանի, Կ. Ճանճիկեաններու եւ ուրիշներու կողմէ:

Շրջանէ մը վերջ ուր մէկտեղուեցին Վարդաշան, Միամանթօ, Թէքէեան, Մե-ծարենց, Ջարիֆեան եւ ամբողջ հոյւը

այն գրողներուն, որոնք կոչուեցին «գեղադէտ սերունդ» եւ որոնցմէ ծա-ւալած գրական ճաշակը, աւելի քան կէս դար ետք, դեռ այսօր եւս իր հը-մայքին տակ կը պահէ հայ գրականու-թեան հաղորդակից մարդը, դիւրին չէր անկասկած՝ հեղասահ անցքով մը դառնալ գնորդին, ջանալ հասկնալ ու սիրել դայն: Եւ սակայն ամէնէն վերա-սրահ կարծիքներն իսկ դժուար է թէ յե-նակէտ մը գտնեն զօրելու այլեւս, երբ այսօր Ջահրատի մը գործը չի մնար լոկ հայ գրականութեան չըջած իրին մէջ եւ - հող չէ թէ համեստ տարողութեամբ - բաղամթիւ լեզուներու թարգմանութիւն-ներ, ինչպէս՝ անգլերէն, ռուսերէն, յունարէն, լիթուաներէն եւլն., դայն կը ծանօթացնեն նաեւ օտարներու: Չենք անգիտանար որ գրական գործի մը ար-ժէքին նկատմամբ միայն ժամանակին տալիք դատաստանը կրնայ վճարկան ձայն մը ունենալ: Միւս կողմէ, հարկ է ընդունիլ նաեւ որ սփիւռքահայ բա-նաստեղծութեան մարդին մէջ վերջին տարիներու ընթացքին երեւան եկած նո-րարարութեան ինչ ինչ օստմանից ճի-գեր արդէն իսկ առաւելագոյն խորու-թիւն մը կ'ընծայեն Ջահրատի սերուն-դին առնչակցող «ժամանակ» ազդակին:

Ջահրատի գրականութիւնը գլխաւո-րապէս իր արտայայտութեան ձեւով ու ոճով է Ոտր: Իր նիւթերը՝ սէրը, մար-դը, երազը, առանձնութիւնը, զանազան երեւոյթները ընկերային կեանքին եւլն. գոյութիւն ունին արդէն գրականութեան ամէն շրջաններուն. եւ ո՛վ, ո՛ր գրա-դէտը պիտի յաւակնէր ըսած ըլլալ իրան մը, արտայայտուիլ նիւթի մը մասին որ իրմէ առաջ ոչ ոքի գրիչին տակ ինկած ըլլար:

Առնենք, օրինակի համար, սիրոյ ըզ-
գացումին արտայայտութիւնը որ այն-
քան տարածուն ընոյթ ունի բոլոր ժողո-
վուղաներու եւ ժամանակներու գրական-
նութիւններուն մէջ:

Աղօթքս ի՞նչ բուռն է ու դիւրին,
Երբ որ լռեն
Ծոռակի վու գամ՝
Ա՛լ ուժաքամ,
Գու հոգիին երդին տակ՝
Եւ ի՞նչ յստակ
Կ'ըլլայ նորէն ամէն բան...
Նոյնիակ ճամբա՞ն
Որ դիւ մահուան
Պիտի տանի՝
Կ'ըլլայ ա՛յնպէս ընտանի...

Կ'ըսէ Ջարիֆեան, երգելով զօրութիւնը
իր սիրոյն՝ որ կը փոխակերպէ ամէն
բան, մինչեւ իսկ ընտանի դարձնելով ի-
րեն՝ մահուան ճամբան: Ու Ջահրատ իր
ճարի Երկինքէն մէջ կէս դար ետքի
մեքենացած աշխարհէն կը ձայնէ.

Հազարումէկ բառ կայ հիմայ ձեռքիս
Ելեկտրոնիկ ուղեղ եմ [տակ
Բառերէն բառ վը պատեմ
Յարմար բառը յարմարին ըով ճարտար-
[օրէն կը կցեմ

Թէ «Երկինքն» է
Կապոյտ վ'ըսեմ - ծաւի կ'ըսեմ - աստե-
[ղադարդ կամ լազուարթ
Իսկ Թէ «Հոգի»ն է
Խենթ հով կ'ըսեմ - մոլեղնած հով -
[փոթորկալունչ - ամեհի

Բայց երբ «դուն» ես
Բառ չեմ գտներ գովքդ հիւսելու - իմ
[անոյշ -
Ելեկտրոնիկ նոյնիսկ ըլլամ վը խանդար-
[ուիմ - կը կենամ -

Հազարումէկ բառ կայ Թէպէտ
[ձեռքիս տակ

Ջահրատ ունի իւրապարտակ ոճ մը.
իր ներկայացումները յաճախ պատկեր-

ներ են տրուած՝ սուր դիտողի մը աչ-
քով ու սրամտութեամբ. մինչ ուրիշ մը
էջեր ամբողջ պիտի լեցնէր աշխարհի
տարօրինակութիւնները, ունայնութիւնը
երդելու, ան «երկնածիծաղ» մը կը դժէ
չորս տողով.

Երկինքն ի վեր խարսխած
Չարաճճի աստղ մը կայ
Երեք միլիոն տարի է - Երկրագունտին
Ու կը մարի խնդալէն [կը նայի

Իր արտայայտութեան ձեւէն ու ոճէն
զատ նոր է հեղինակին ըով - անշուշտ
որպէս հետեւանք ներկայ կեանքի պայ-
մաններուն - հարցերը նկատելու եւ
զգալու իր կերպը: Երբ կ'երգէ «պատ-
մութիւնը հանրակառուով ճամբորդու-
թեան մը», ուր յուսախարութիւնը կու
զայ իբրեւ վերջակէտ լռեցնել երազելու
մարմալը, հոն չկան զգացական խոր
զեղումներու յորձանքներ կամ ճշող,
սառն յուսահատութեան մը նկարագրու-
թիւնը:

Տասը դրուէ է կ'ըսէ - կը նստի
Կ'երազէ - կ'ուզէ որ հեռուններն երթայ
Ուր - ով դիտէ -
Թերեւս ետ մանրութեան տարիներուն
Թերեւս առաջ յուսացած օրերուն

Բայց հանրակառ չէ այս գիծէն դուրս
[չ'եւելեր
Բայց հանրակառ չէ այս գիծէն դուրս
[չ'եւելեր

Մարդուն ու իր շրջապատին մշտա-
կան բախումն է որ կու տայ հեղինակը
«Մեծ Գաղաքը» առան քերթուածով.
այդ անխուսափելի բախումը միշտ գո-
յութիւն ունի մարդուն հետ, այն մար-
դուն որ «պտտիկ» է մնացած՝ իր պո-
ղոտաններուն ու չէնքերուն նման՝ մեծ
հաճոյք ու մեծ ցաւ ունեցող քաղաքին
մէջ:

Ամէն ինչ մեծ է մեծ քաղաքին մէջ
հաճոյքը մեծ
ցաւը մեծ
պողոտաներուն ու չէնքերուն նման

Ու անոնք որ պտտիկ մարդիկ են
Երբեք հանդարտ պիտի չըլլան մեծ քա-
[ղաքին մէջ

Եւ կարապետ մը «մեծ քաղաքին» բը-
նակիչներէն՝ շրմորած կը մնայ երբ օր
մըն ալ կը սալարկուի Մէհմէտ Պէյ փո-
ղոցը՝ որուն մինչեւ ամենայնպէս փո-
շին ծանօթ էր ինք:

Սալարկեցին Մէհմէտ Պէյ փողոցը
Մայթեր շինեցին
Հիմայ կարապետ
Ձի գիտեր մայթէ՞ն քալէ Թէ մէջ-
[տեղէն

Կիկօ Ջահրատի հերոսն է որ մարմ-
նացած է «մեծ» քաղաքին մէջ պտտիկ
մնացած մարդերու զանազան յատկանի-
շերուն համադրութեամբ: Պարզամիտ,
բարի, ուրախ ըլլալու պատրաստ, իր
մտածումներով, երազներով, իւրապա-
տուկ փիլիսոփայութեամբ՝ շատերէն
մէկն է ան: Մութին կը վարնայ Ահմէտ
Էֆէնտի փողոցէն անցնելու, որովհետեւ
մութ է փողոցը, մութին համբուրուող
զոյգեր վան ու հոն իր առանձնութիւնը
միտքը կ'իյնայ: Մեծ քաղաքին մէջ զե-
րոյ մըն է Կիկօն՝ որմէ սակայն երբ հա-
րիւրներ ըովէ ըով կու գան վը կազմուի
«Մեքէ»ը: Ան հայելի մըն է բռնուած՝
մեղմէ ամէն մէկուն դիմաց ու բոլորս
ալ հոն քիչ մը մեղ, մեր պատկերը կը
տեսնենք:

Կաղանդը, կաղանդ Պապան երբ վ'ի-
նան Ջահրատի դրիշին տակ վը մերկա-
նան իրենց աւանդական հմայքէն, կը
դադրին մանկական խանդավառ անուրջ-
ներու հերոսներ ըլլալէ: Կաղանդ Պա-
պային մօրուքը ալիւրին, հացին կար-
տը կ'արթնցնէ մարդուն մէջ ու ան կը
հարցնէ:

Կաղանդ Պապային մօրուքը ճերմակ է
Ալիւրի նման

Ըսէ - Կաղանդ պապա
Մօրուքէդ ՀԱՅ վը շինուի՞

Դարձեալ ընկերային կեանքին առ-
թած դառնութեան, հիասթափումին,

լաւին ու բարին բացակայութեան ցան
է արտայայտուած «Կաղանդի Մառ» քեր-
թուածին մէջ՝ ուր հեղինակը կ'ըսէ.

... Մառէն պերճանք ու զարդարանք
Մառէն խաբկանք ծառէն պատրանք ու
[Երազանք կախեցէք
- Կից մը տուէք - Թող փլի

Նոր ծառ մ'առէք - ծառէն ձանձրոյթ
[կախեցէք
Մառէն ձանձրոյթ ծառէն ձանձրոյթ ծա-
[ռէն ձանձրոյթ կախեցէք
- Այդքան առատ արդէն ուրիշ ի՞նչ
[ունիք -

Խոսացած բանաստեղծութեան եզական
նմոյշ մըն է հեղինակին «Ուսկ Ստեղծ
Կինը»-ն. ափ մը, ափսէ մը, ոսպին ամէն
մէկ հատիկին հետ միտքը կը փնտռէ
հին երգերու, երազներու, կեանքերու
վրան. դժուար կամ դիւրին անցած
կեանքեր, ինչո՞ւնները բոլորին, ամէն
նոր հատիկի հետ նոր պատմութիւն մը
ու այս բոլորը վիտուալաւոր պատմաւոր
մը նմանութեամբ շարուած բառերով
միայն վազմուած. նախադասութիւն,
խօսք չկան հոն, ոչ ենթակայ, ոչ բայ:
Հեղինակը վերջին ծայր նիւթակա-
նացած աշխարհին մէջ՝ որուն յատկա-
նշական հերոսը դարձած են ելեկտրոնիկ
ուղեղը կամ հաշուիչ մեքենան, չի կըր-
նար երբեք մոռնալ գոյութիւնը սիրոյն
ու երազին. ամենակարող, հզօր մեքե-
նային անսխալականութիւնը, մեծութիւ-
նը ծաղրելու մարմալով, կամ առօրեայ
կեանքին ցամաքութեան հանդէպ յայտնի
պոթիկումով մը կը հարցնէ.

Թէ մեքենայ չես - հաշիւ ես -
Թիւ Թիւի ըով կորած Թիւ ես -
Իսկ ես սէքն եմ հաշիւէ դուրս -
Կը սիրե՞ս

Ես անհաշիւ զարնող սիրտն եմ -
Սա չեմ նա չեմ - բայց երազն եմ -
Դուն մեքենան ես անսխալ
Ձեռ գիտեր

Ձգացումներով տոգորուն անձն է կրկին որ կը պաղատի Ձար Բաներուն որ չպատահին:

Ձար բաներուն բարեւ ըսէք մեր կողմէն

Ըսէք դիտենք թէ անոնք կան ու միշտ
[կրնան պատահիլ]

Ըսէք դիտենք թէ կրնան
Օր ցերեկով մուտք գրելերով յանկարծակի
[գալ մեզի]

Բայց դուք ըսէք չար բաներուն որ չըլլան
Որ չըլլայ թէ պատահին
Կամ երբ ըլլան հեռու մնան մեր այս
[պզտիկ աշխարհէն]

... Համն ու հոտը խաթարելու չհասնին

Վկանանչ Հոգիի «Հոծ» քերթումին մէջ քերթողը իր տաղերով, կանչով, շարկապն է՝ որ աշխարհասփիւռ եղբայրները կը միացնէ, գուրգուրոտ շաղախն է՝ որ կը զօդէ անուններ իրարու եւ կորուստէ կը փրկէ զանոնք:

Ես կարօտի տաղն եմ անծայր – ամէն օր
ծայրէն կը գրուիմ

Ո՞ր ժողովուրդը շնչեր է արդարեւ այնքան կարօտ, ու Հայէն աւելի ո՞վ պէտք ունի փրկարար շաղախին, զգալու, շնչելու համար թէ առանձին չէ, կորսուած չէ. եւ ահա՛ Ձահրատի երգը անցնելով սփիւռքէ սփիւռք կը դառնայ այդ սփոփարար կապը որ կը զգացնէ հայուն թէ միմեկ չէ այս երկրագունդին տին հազար ծագերուն վրայ:

Գոյատեւելու ամուր եւ յամառ նը պատակն է որ վերգուրի Առանց Մղձառանջի՞ն մէջ:

Քանի որ մենք գետ եղեր ենք – հոսեր –
Թէ ծովն ու լիճը ոռոգելն է պէտք
Այդ մենք վճռողները

... Քանի որ մենք կէտ ենք եղեր փոքրիկ –
Թէ անհրաժեշտ է օր մ'ալ կորսուիլ
Մենք չենք կորսուիլ

Եթէ ժողովուրդներու, ազգերու կեանքին բնական ընթացքն է ծնիլ, ապրիլ՝ ըլլալով դեռ մը՝ որ վճռողքէ լիճ ու ծով, եւ կամ նետ մը՝ որ անջրպետներ կը ծակէ, հոն կա'նք մենք, հող չէ թէ ըլլանք փէտ մը միայն՝ փոքրիկ, աննշան. եթէ նոյնիսկ անհրաժեշտ վախճանն է օր մըն ալ կորսուիլ այս հսկայ բեմէն, հոն չկանք, այդ ընթացքը կը կասի մեր գոյատեւելու հաստատ մարմաջին դիմաց:

Ձահրատի գործը այս նոր հրատարակութեամբ՝ անկասկած պիտի ծաւալի աւելի լայն ավերու երկայնքին, յատկապէս հայրենիքի ընթերցող զանգուածներուն մօտ: Ալ. Թոփչեանի քննական մերձեցումն ու մանրակրկիտ վերլուծումն ալ լաւ ուղեցոյց մը կ'ընծայեն՝ մերձենալու համար Ձահրատի բանաստեղծութեան:

Ա. ԹՈՓՈՑԵԱՆ



ՄԱՅՐ ԾՈՒՑԱԿ ԶԵՌԱԳՐԱՑ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

Կազմեց

ՆՈՐԱՅՐ ԱՐԲ. ՊՈՂԱՐԵԱՆ

Ե. ԽՈ., ԵՐԱՍԱՊԷՄ 1974, էջ 552,
Ը. ԽՈ., ԵՐԱՍԱՊԷՄ 1977, էջ 468:

Լուռ ու խաղաղ մթնոլորտում, ամփոփուած ինքն իր մէջ, լուրջ բանասէրին վայել հանդարտութեամբ, Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի գրչադրերի ցուցակը կազմում եւ մէկը միւսի ետեւից լոյս է ընծայում վանքի միաբան Գեորգ. Տ. Նորայր Արքեպ. Պողոսեանը:

Սրբայրացելութեան մի առիթով անցած Յունիսին եղայ Ս. Յակոբեանց վանքի ձեռագրատանը եւ հիացումով դիտեցի Թորոս Ռոսլինի նուրբ վրձինին պատկանող գեղազարդ ու գեղաճաշակ, ոսկեզօծ ու քաղմագունի մանրանկարները, սրտանց նախանձեցի գերաշնորհ

Սրբազանին, իր ունեցած դիւրութիւնների, իրեն լայն ձեւով տրամադրուած միջոցների ու հնարաւորութիւնների համար: Անմիջապէս միտքս գնաց դէպի մի քանի տարի առաջ, երբ զբաղուած էի Նոր Զուղայի գրչագրերը Ս. Տէր-Աւետիսեանի կազմած ցուցակի հետ համեմատելու եւ լրացումներ ու ուղղումներ կատարելու, ինչպէս եւ կազմելու մնացեալ գրչագրերի ցուցակը. ի՞նչ մեծ տանջանքով էի կարողանում մէկ երկու հատոր գրչագիր ստանալ մատենադարանից, զրկուած լինելով անհրաժեշտ դէպքում գրչագրերը միմեանց հետ համեմատելու, գրչագրի կամ գրչութեան թուականի առթիւ եղած կապկածն ու անորոշութիւնը հարթելու եւ այլ նման խնդիրներ պարզելու հնարաւորութիւններից, որով առանձնապէս օրերով եւ երբեմն էլ՝ հսկառակ իմ շտապողականութեան (ըստ իմ վրայ դրուած պարտականութեան)՝ ինձ գրչագրեր չտրամադրուելով, թանկ ժամանակս վատնում էի անհանգիստ ոգով:

Ահա՛ թէ ինչո՞ւ, սրտանց նախանձեցի Սրբազանին, բայց եւ խիստ ուրախացայ եւ հանդատութիւն զգացի, իրեն ընձեռուած այդ դիւրութեան համար:

Ս. Յակոբեանց վանքն ունի ցուցակագրուած 4182 գրչագիր, որոնցից բացի դեռեւս կան վանքի այս ու այն սենակում ու գրքերի մէջ գրչագրեր, որոնք գտնուում են երբեմն, աւելացնելով դրանց թիւը:

Երուսաղէմի գրչագրերի անցեալում տպագրուած վեց հատորներն իրենց մէջ ընդգրկում են 2000 հատոր, այսինքն ամբողջ ձեռագրերի կէտից թիւ պակաս, իսկ վերջին երկու՝ Եօթներորդ եւ ութերորդ հատորներն ունեն 800 միւսոր, որոնց ընդհանուր գումարը լինում է 2800 հատոր:

Եօթներորդ հատորն ունի 552 էջ, որտեղ նկարագրուած են 365 գրչագիր, իսկ ութերորդ հատորն ունի 468 էջ, ուր նկարագրուած են 435 գրչագիր:

Հսկառակ տեսքերով հատորում տեղ գտած 70 հատոր աւելի գրչագրին, 100 էջով աւելի պակաս է իր նախորդից, եւ

դա այն պատճառով՝ որ Սրբազանը, համար 2559-ից 2669, այսինքն 110 գրչագիր, նկարագրել է շատ համառօտ, հազիւ մէկ երկու տողով, իսկ դա էլ «Արտագրելով Մեծորդ Վրդ. Նշանեանի 1907 Սեպտ. 3 թուականը կրող ձեռագիր տետրակից»։ Թէ ինչո՞ւ այս գրչագրերն եւս միւսների նման լրիւ ու մանրամասն չեն նկարագրուել, հակառակ եղած հարցումին, բաւարար պատասխան չտացուեց:

Այս խմբին պատկանող գրչագրերի մէջ (էջ 263-279) կան մի քանի խիստ հետաքրքրականներ, նախ այն տեսակէտից՝ որ մի մասը մագաղաթեայ է, բոլորն էլ արծաթապատ կամ ոսկեպատ, ոմանք բաւական հին, իսկ մի քանիսը գրուած Նոր Զուղայում, որ մեզ աւելի է հետաքրքրում, եւ որ դեռ աւելի կարեւորն է՝ դրանցից երկուսը, համար 2563 եւ 2660, մագաղաթեայ Աւետարաններ են, ոսկեպատ ու արծաթապատ, գրուած՝ Աւետիս քահանայի եւ մանրանկարուած՝ Թորոս Ռոսլինի ձեռքով, որոնց պատուիրատուներն են եղել Կեռան Թագուհին եւ Լեւոն Թագաւորը (1201 թուին):

Եօթներորդ հատորում նկարագրուած գրչագրերից չորսը՝ «Քարոզգիրք» (համար 2147), «Ժամագիրք Մտեմի» (հմար. 2244), եւ երկու «Խորհրդատետր»-եր (հմար. 2258 եւ 2267), գրուել են Նոր Զուղայում:

Սրանցից առաջինը՝ «Քարոզգիրք», գրուել է գրչուհի Սառայի ձեռքով 1670 թուին: Գրչութեան տեղը ձեռագրում յիշուած չլինելով՝ Նորայր Սրբազանը Նոր Զուղան առել է անկիւնաւոր փակագծի մէջ: Ի լուսաբանութիւն ասենք, որ նոյն Սառայի ձեռքով գրուել է նաեւ Նոր Զուղայի գրչագրերի համար 464 «Ճառըմտիր» (Յուլիսի Ս. Տէր-Աւետիսեանի, Վիեննա 1970, հմ. 222), ուր եւս Սառան հօր անունը յիշած է Գէորգ եւ մօր անունը՝ Գօզալ: Սառան այս «Ճառըմտիր» յիշատակարանում գրում է նաեւ Նոր Զուղայի Կուսանաց վանքի կոյսերի անունները եւ յիշում Յովհան Վարդապետի ուրացութեան մասին, Կոյս Քրուի ՌձԼԴ Շամս ԺԹ-ում (1685) Ս.